կասկածելով՝ կշտապէ, կը դառնայ իւր տուն, եղածը կիմանայ, տէֆի հաւարէն (կենայ և մահու պատերազմի թմբուկը) կածէ, կը հաւաքէ 366 դիւղի Եզդի ժողովուրդը, կատաղած եզդիներ մեծ կոտրած կանեն, կը դիմեն Ալիի վերայ, Ալին ընկճուած և յուսահատած կը դիմէ այլ և այլ քուրդ ցեղապետներու, որք ևս առթի կը սպասէին Միր-չոպանի հետ պատերազմելու, օգնեցին Ալիին։ Բուխուրի Խունանի (արիւնալից անցք) մօտերն[1] արիւնահեղ պատերազմը կը լինի, Ալիի ձեռքն կը կտրուի, Ցղմուտ արիւն կը հոսի, քրդեր կը յաղթուին, յաղթուող ցեղապետներ կրօնական պատերազմն կը քարոզեն, կօգնեն ամբողջ մօլեռանդ մուսուլմաններն, որք կը մտնեն Ապաղայ. Եզդիք և Հայք մեծ դիմադրութիւն մի կանեն և շատ կոտրած տալէ յետոյ կընկճուին, խոյս կտան Երևանայ նահանգին մէջ գտնուած ըստ Թուրքայ Աղպարան, ըստ Հայոց Աբարան ասուած վայրն, որ մինչև այսօր Եզդիք այդ տեղ զետեղուած են։[2]

ԽՃՈՒՂԻ

Շահ-Եօլի ճանապարհին վերայ այս չափ աւանդութիւն հաղիւ կարողացանք ձեռք բերել. այժմ դառնամք արքունական նոր խճուղոյն և քանի հասարակութեան ճանապարհներու վերայ։

Բագրևանդայ երկրորդ արքունական նոր խճուղին

---

1. Ապաղայի արևելեան կողմէ կսկսի Ցղմուտ գետ։

2. 50—60 գիւղի չափ եզդիք կան նաև Զօր, Սինակ և Թանդուրակ լեռներու մէջ։